

3967

281.6

U-39

1915

2010

2012

85

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ
ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ

ՀԱՄԱՌՕՏ ԴԱՍԱԳԻՐՔ

Պետական եւ քաղաքային դպրոցների համար

○○○○○○

ԿԱԶՄԵՑԻՆ

Յովհ. ա. ֆ. Մարտիրոսեան եւ Գիւս ա. ֆ. Աղանեան



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

2001

Առաջին տպագրութիւն

ԹԻՖԼԻՉ

Տպարան Ն. Աղանեանի, Պոլից. 7

1915

281.6
5-39

H A P M.
2-951a

281.6
15-39

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ

ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ

ՀԱՄԱՌՕՏ ԴԱՍԱԳԻՐՔ

3626

Պետական եւ քաղաքային դպրոցների համար

○○○〇○○

ԿԱԶՄԵՑԻՆ

Յովհ. ա. Բ. Մարտիրոսեան եւ Գիւս ա. Բ. Աղանեան

○○〇〇〇〇

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Չ Ա Ր Դ

Առաջին տպագրութիւն

Թ Ի Ֆ Լ Ի Զ

Ցպարան Ն. Աղանեանի, Պոլից. 7

1 9 1 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՐԱՆ

Տ Պ Ո Ւ Ա Մ

ՀՈՔԵԻՈՐ ԺԱՅՐԱԳՈՅՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ

ՀՐԱՄԱՆՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՐԱՆ

45060-ահ.



29479-63

2101

ԱՍՏՈՒԱԴԱՊԱՀՏՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է աստուածապաշտութիւնը.

Աստուածապաշտութիւնն է Աստծուն ծառայելը այնպէս, ինչպէս որ Հայոց եկեղեցին սահմանել է:

Սահմանողը.

Աստուածապաշտութիւնը ամենից առաջ սահմանեց ինքը Քրիստոս, որ մեզ սովորեցրեց պաշտել Աստծուն հոգով և ճշմարտութեամբ, և յետոյ յանձնեց այն իր առաքեալներին: առաքեալներն էլ յանձնեցին իրանց յաջորդ հայրապետներին և եպիսկոպոսներին:

Հայոց եկեղեցու աստուածապաշտութեան և եկեղեցու ծիսակատարութիւնների սահմանողը եղան Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալները և ս. Գրիգոր Լուսաւորիչը:

Տեսակներ.

Աստուածապաշտութիւնը լինում է հասարակաց և մասնաւոր:

Հասարակաց աստուածապաշտութիւնը կատարւում է եկեղեցում սրբազնագործ պաշտօ-

նեաների ձեռքով. իսկ մասնաւորը այն է, երբ մէկ անհատ կամ, ըստ ցանկութեան, ամբողջ խմբեր բաց են անում իրանց հոգին Աստծու առջև և աղօթում նրան:

Հասարակաց աստուածապաշտութիւնը պէտք է կատարել հանգիստաւոր կերպով և ջերմեռանդ սրտով, արտաքին արարողութիւնը միացնելով ներքին զգացմունքի հետ, և հոգեւո՛ւ մարմնի մաքրութիւնով:

Մասնաւոր աստուածապաշտութիւնը պէտք է կատարուի նոյն ջերմեռանդութեամբ մեր գործերի սկսուելու և վերջանալու, ուրախութեան և տրտմութեան ժամանակ, ճաշից առաջ և յետոյ, ննջելիս և արթնելիս եայլն, որ պէսզի Աստծուց ստանանք շնորհ և ողորմութիւն մեր ձեռնարկութիւնների համար:

ԱՍՏՈՒԱԾՊԵՂՏՈՒԹԵԱՆ ԺԱՄԵՐԸ

Եկեղեցին առաջին դարերում սահմանել էր աղօթել օրը ինն անգամ:

1. Գիշերային, որ կատարւում էր կէս գիշերին:

2. Առաւօտեան, որ լինում էր առաւօտը՝ լուսաբացին:

3. Արեւագալի, արևը ծագելու ժամանակ:

Այժմ այս կարգը կատարւում է միայն մեծ պատի հասարակ օրերին:

4. 5. 6. Ճաշու երեք ողորմեաները — աւիական երրորդ, վեցերորդ և իններորդ ժամերին — որոնք այժմ կատարւում են միասին:

7. Երեկոյեան ժամերգութիւն, որ սկսւում էր արեւամտից առաջ:

8. Խաղաղական ժամ, որ կատարւում էր մութն ընկնելուց յետոյ:

և 9. Հանգստեան ժամ կամ եկեցէ, որ կատարւում էին գիշերը հանգստանալուց առաջ:

Այժմ այս բոլոր կարգերը միացած են և կատարւում են օրը երկու անգամ՝ առաւօտեան և երեկոյեան:

ՍՐԲԱԶԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Հասարակաց աստուածապաշտութեան ժամանակ կարդացւում է սուրբ գիրքը, այն է՝ հին և նոր կտակարանը և երգում են շարականներ, այն է՝ հոգևոր երգեր:

Հին կտակարանը պարունակում է իր մէջ աշխարհի ստեղծման պատմութիւնը և մարգարէների գուշակութիւնները Յիսուսի մասին. իսկ նոր կտակարանը՝ Յիսուսի կեանքն ու գործունէութիւնը երկրի վրայ:

Բացի դրանից՝ Հասարակաց աստուածաշտուութեան ժամանակ կատարուում են զանազան սրբազան գործողութիւններ. այն է՝ խաչակրնքելը, երկրպագելը, խուսկ ծխել պատկերների առաջ և ժողովրդին, օրհնել խաչով, ակետարանով և սրբերի մասունքներով. կատարուում է՝ թափօր, նախատօնակ և հսկում:

Խաչակնքելով յիշում ենք Փրկչի մահը խաչի վրայ մեր փրկութեան համար:

Երկրպագելով ցոյց ենք տալիս մեր խոնարհութիւնը և հպատակութիւնը Աստծու մեծութեան և կամքի առաջ:

Խուսկ ծխելը պատկերների առաջ նշանակում է, որ մեր ջերմեռանդ աղօթքով յարգանք ենք տալիս նրանց և ցանկանում ենք, որ մեր աղօթքներն էլ խնկան ծխի նման բարձրանան Աստծու մօտ:

Խաչով, ակետարանով եւ սրբերի մասունքներով օրհնելը նշանակում է, որ օրհնում ենք մեր Փրկչի իսկական պատկերով:

Թափօր կատարում են տէրունական տօներին, նոյնպէս և անձրևի պակասութեան և ուրիշ ժողովրդական թշուառութիւնների ժամանակ, օրհնելով երկրի չորս կողմերը, և Աստծու ողորմութիւնը հայցելով:

Նախասօնակը, ինչպէս բոլի նշանակութիւնն էլ ցոյց է տալիս, կատարում են տէ-

րունական և նշանաւոր սրբերի տօների նախընթաց երեկոները սեղանի առաջ զգեստաւորուած և վառած մոմերով, կատարելով միւս օրուայ կարգի մի մասը: Առաջին դարերում մօմը գործ էին դնում միայն լուսաւորութեան նպատակով, իսկ այժմ փոխուած է իբրեւ յարգանքի նշան դէպի Աստծու տունը:

Հսկումը այն է, որ գիշերը մնում են արթուն և աղօթքով են անցկացնում, կատարելով Հանգստեան կամ Եկեցէի կարգը:

Հայոց եկեղեցին ինչպէս հասարակաց աստուածաշտուութիւնը, այնպէս էլ բոլոր խորհուրդները սկսում է և վերջացնում Հայր մերով, որ հիմքն է բոլոր աղօթքների և խնդրուածների:

ԵԿԵՂԵՑԻ ԿԱՐ ՏԱՃԱՐ

Եկեղեցու մասերը.

Եկեղեցի խօսքը նշանակում է հաւատացեալների ժողով:

Եկեղեցին երկուսի է բաժանուում. — զինւորեալ և յաղթական:

Զինուորեալ եկեղեցի կազմում են կենդանի հաւատացեալները, որոնք, ինչպէս Քրիստոսի զինուորներ երկրի վրայ, զինուած են քրիստոնէական հաւատով, յուսով և սիրով, կուում

են ամեն տեսակ չարիքների դէմ և յաղթում: Իսկ յաղթական եկեղեցի սրանց հոգիներն են, որոնք երկրի վրայ քաջութեամբ տանելով իրանց պատերազմը՝ փոխուել են երկինք յաղթական կերպով:

Նիւթական եկեղեցին այն շէնքն է, քարից կամ փայտից, որ յատկացրած է հասարակաց աստուածաշատութեան համար և որը օրհնում և օծում է եպիսկոպոսը սուրբ մեռնով: Այս շէնքն էլ եկեղեցի է կոչւում նրա համար, որովհետև Քրիստոսին հաւատացող ժողովուրդը այնտեղ է աղօթում Աստծուն, այնտեղ են կատարւում եկեղեցու սրբազան խորհուրդները և աստուածաշատութեան կարգը և ընդունում ենք, որ այնտեղ աներևոյթ կերպով բնակւում է Աստուած, որի համար եկեղեցին կոչւում է նաև Աստծու տուն:

Հայկական եկեղեցին երկար քառանկիւնի ձև ունի, նաև խաչաձև և ունի երեք մաս. — 1. գաւթ, 2. իսկական տաճար և 3. բեմ, որի վրայ հաստատուած է սեղանը:

Գաւթը տաճարի արտաքին մասն է, եկեղեցու արևմտեան պատին կից, ուր հին ժամանակ հաւաքւում էին չմկրտուածներն ու ապաշխարողները, երբ պատարագի ժամանակ սարկաւազը երգում էր «մի ոք յերախայից» երգը:

Իսկական տաճարը այն մասն է, որ գտնւ-


ւում է գաւթի և բեմի մէջտեղը և բաժանւում է երկուսի. — առաջին մասում կանգնում են հոգևորականները և աստուածաշատական կարգը կատարում, իսկ երկրորդ մասում կանգնում է ժողովուրդը: Այդ մասում գտնւում է քարէ աւագանը, ուր մկրտում են հաւատացեալներին:

Բեմը տաճարից բարձր է մի քանի աստիճանով ու բաժանւում է նրանից վարագուրով. այնտեղ բարձրանում են միայն սրբազնագործ և աստիճան ունեցող հոգևորականները: Բեմի վրայ հաստատուած է մի բարձր սեղան քարէ սիւնի վրայ, ուր մատուցւում է սուրբ պատարագը:

ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԷՔԸ

Երբ հաւատացեալ ժողովուրդը փափագում է եկեղեցի ունենալ, հրաւիրում է եպիսկոպոսին հիմքը օծելու և յետոյ էլ, երբ շինութիւնը պատրաստ լինի, օրհնելու և օծելու եկեղեցին:

Եպիսկոպոսը վերցնում է ճարտարապետական լարը, զծում է գետնի վրայ շինութեան ձևը, վերցնում է բրիչը, առաջ ինքն է սկսում քանդել, իսկ յետոյ շարունակւում է ժողովուրդը:



Հայոց եկեղեցու յատկագիծը

Այսպէս գցեց ս. Էջմիածնի տաճարի հիմքը Հայաստանի լուսաւորիչ ս. Գրիգորը:

Երբ որ եկեղեցու հիմքը պատրաստ է լինում տուած յատակագծի համեմատ, եպիսկոպոսը, հոգևորական դասի և ժողովրդի բազմութեան հետ, ս. մեռոնը տանում է նոր եկեղեցու տեղը: Վաղօրօք պատրաստած է լինում 16 կտոր քար հիմքի համար, որոնց եպիսկոպոսը օրհնութեամբ լուանում է գինով և ջրով և օծում ս. մեռոնով. յետոյ փաթըթելով սպիտակ կտաւի մէջ՝ ամեն մէկը դնում է իր համար յատկացրած տեղը:

Այդ քարերից տասներկուսը կրում են առաքելների, երկուսը Մարկոս և Դուկաս աւետարանիչների, մէկը մեր առաջին լուսաւորիչ ս. Թադէոսի, որ Քրիստոսի աշակերտներիցն էր և մէկը ս. Գրիգոր Լուսաւորչի անունը: Քարերը կրելու համար որոշուած են լինում տասնվեց աշխարհական կնքահայրեր:

ԵԿԵՂԵՑՈՒ ՕԺՈՒՄԸ

Երբ եկեղեցու շինութիւնը բոլորովին պատրաստ է լինում, դարձեալ հրաւիրում են եպիսկոպոսին օծելու:

Նախընթաց երեկոյեան եպիսկոպոսը, մե-

ռոնակիր քահանան և հոգևորականները զգեստաւորուած, ժողովրդի բազմութեան հետ ս. մեռնոր հանդիսով տանում են նոր եկեղեցին: Այնտեղ կատարում են նախատօնակ, եկեղեցին անուանում են տէրունական մի տօնի կամ սրբերից մէկի անունով, կատարում են երեկոյեան ժամերգութիւնը և հսկումն է լինում: Այս կարգը կոչւում է օծման նաւակատիք:

Միւս օրը առաւօտեան նոյն կարգով սկսւում է օծման հանդէսը արեւմտեան դրան մօտ, ուր դուռը փակած կատարում են զոնաբացէքի կարգը:

Յետոյ մտնելով եկեղեցի, եպիսկոպոսը շրջով ու գինով լուանում է քարէ սեղանը և օծում նրա վրայ փորագրած անկիւնի խաչերը և մէջտեղի խաչը, որ կոչւում է գագաթ: Սեղանը ծածկում է եօթը գոգնոցով, դնում է սեղանի վրայ հինգ վառած աշտանակ, բազմեցնում է այնտեղ խաչ, աւետարան և փրկչական պատկեր, իբրև երևելի նշաններ Փրկչի աներեւոյթ կերպով ներկայ լինելուն սեղանի վրայ:

Եպիսկոպոսը նոյն կարգով օծում է աւագանը, չորս սիւները՝ չորս աւետարանիչների անունով, զոնների կամարները, խորանների ճակատները, եկեղեցու արեւելեան ճակատը, խորհրդանոցը և աւագանը. և այլն:

Օծման արարողութիւնը կատարւում է զրահամար սահմանուած աղօթքներով:

Օծումից յետոյ պատարագ է մատուցանում ինքը եպիսկոպոսը:

Այդ օրից ութ օր շարունակ նաւակատիքի տօն են կատարում, իսկ իններորդ օրը կատարւում է նորած եկեղեցու տօնը:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՆՈՒՆԵՐ

Եկեղեցական գլխաւոր անօթները, որոնք գործ են դրւում աստուածաշտութեան ժամանակ, սրանք են.

Սկիհ. Սկիհը արծաթէ կամ ոսկէ բաժակ է. սրա մէջ ածւում է սուրբ խորհրդի գինին, որ պատարագին քահանայի աղօթքով փոխարկւում է Յիսուսի արեան: Սկիհը այն բաժակի նշանակութիւնն ունի, որից Յիսուս խորհրդական ընթրիքի ժամանակ տուեց խմելու իր աշակերտներին՝ ասելով. — «Խմեցէք ամենքդ այս բաժակից, որովհետեւ այս իմ արիւնն է»:

Մաղզմայ. ոսկէ կամ արծաթէ փոքրիկ ափսէ է, որի վրայ քահանան դնում է նշխարը ու ծածկում քօղով:



Մասնաճուղի. արծաթէ կամ ոսկէ փոքրիկ տուփ է, որի մէջ պահուում է Յիսուսի մարմնի և արեան մասը՝ հիւանդներին, բանտարկուածներին և մկրտութեան ժամանակ երեխաներին հաղորդելու համար:



համար:



Բաժակաման. արծաթէ կամ ապակէ շիշ է, որով տանում են սեղանի վրայ՝ պատարագի գործածութեան համար:

Մեռնաշիւ.

արծաթից շինած աման է, մեծ մասամբ աղանձակ, ի նշան ս. Հոգու աղանակերպ երևման. գործ է դնում ս. մեռնողին հետը համար:



Բուրվառ.

խուռնկ

ծխելու անօթ է. սրանով խնկարկում են եկեղեցում բոլոր հոգևոր հանդէսների ժամանակ և խրնդում, որ մեր աղօթքներն էլ խնկան ծխի նման բարձրանան դէպի երկինք ու լսելի լինին Աստծու առաջ:

Խաչվառ. դրօշակ է, գլխին խաչ և վրէժն տէրունական պատկեր. տանում են առջևից եկեղեցական բոլոր հանդէսների



ժամանակ ինչպէս յաղթութեան դրօշակ: Խաչվառի գործածութիւնը եկեղեցու մէջ մտաւ Մեծն Կոստանդինոս

կայսեր օրից, երբ

նա փոքր զօրքով

գնում էր կռուե-

լու թշնամու դէմ

և ճանապարհին

նրան օգի մէջ

երևեցաւ մի լու-

սեղէն խաչ, որի

վրայ գրած էր.

«սրանով կ'յաղ-

թես».

նա անմի-

ջապէս հրամայեց

զօրքին դրօշակ-

ների վրայ խաչ

նկարել և այդպի-

սով թշնամուն

յաղթեց: Այդպէս

քից սկսած սկսե-

ցին ինչպէս զօր-

քի առաջ, այն-

պէս էլ եկեղեցում

ամեն հանդէսնե-

րի առջևից դրօ-

շակ տանել՝ վրէժն

խաչ նկարած:





Քոց. արծաթէ բոլորակ մի գործիք է, որի վրայ դրոշմուած են հրեշտակների պատկերներ. ամրացրած է երկար ձողի վրայ և սարկաւազները շարժում են պատարագի խորհրդաւոր երգեցողութիւնների ժամանակ: Քշոցը այն բանի նշան է, որ աներևոյթ կերպով հրեշտակները սպասաւորում են սուրբ խորհրդին:

Խաչ. խաչը գործ ենք դնում յիշելու Յիսուսի իսկական խաչափայտը, որի վրայ նա խաչուեց մարդկանց փրկելու համար: Այս պատճառով խաչը մի պարծանք է ամեն մէկ քրիստոնեայի համար, և գործ է ածւում ամբողջ աստուածապաշտութեան ժամանակ:



Խաչը այնքան մեծ համարում ունի քրիստոնեաների համար, որ մինչև անգամ գործ է ածւում իբրև պատուի նշան և իբրև հոգևոր զէնք՝ շատերը կրում են իրանց կրծքին:

Բացի սրանցից գործ են դրւում նաև՝

Պատկեր

Հին ժամանակ, ուզենալով նոր դարձած հաւատացեալների սրտերում տպաւորել սուրբ

մարդերի գործերը՝ նրանց պատկերները կախում էին եկեղեցում, որտեղից մնացել է սովորութիւն և մեր մէջ:

Հայոց եկեղեցում գործ են ածում տէրունական, Աստուածածնի և այն սրբերի պատկերները, որոնց տօնում է մեր եկեղեցին:

Հայոց եկեղեցում կարելի է գործ ածել միայն իւղաներկ պատկերներ, որ օծում է եպիսկոսը ս. մեռնոյ:

Աւետարանի ջահ.

Աշտանակ և ջահը գործնական նշանակութիւն ունին՝ մէջը կերոններ և մոմեր ամրացնելու համար:

Գրակալ.

Գրակալը գործ է դրւում՝ վրէն եկեղեցական գրքեր դարսելու համար:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԶԳԵՍՏՆԵՐ

Հայոց եկեղեցում գործ ածուող զգեստների մեծ մասը վերցրած է հին ուխտի եկեղեցուց: Պատարագի ժամանակ գործ են դրւում հետեալ զգեստները.

Քահանան գործ է դնում՝ սաղաւարտ, շապիկ, փորուրար, գօտի, բազպան, վահաւ և շուրջառ:




Եպիսկոպոսը գործ է դնում այդ բոլորը բացի սաղաւարտից և նոյնպէս՝ թագ կամ խոյր, եմիփորոն և գաւազան:

Կաթողիկոսը՝ բացի եպիսկոպոսի գործածած զգեստներից՝ նաև կոնքեռ:

Սարկաւազը՝ շապիկ և ուրար:

Կիսասարկաւազը՝ շապիկ և բազկուրար:

Իսկ դպիրները միայն շապիկ:



Սաղաւարտը շինուած է կերպասից, վրէժն ասղնէգործած Բրիստոսի տնօրինութեան չորս պատկերները և գլխին ամրացրած խաչ: Սաղա-

ւարտը Փրկչի փշեայ պսակի նշանակութիւնն ունի:

Շապիկը սովորաբար սպիտակ է լինում՝ ի նշան մաքրութեան և անմեղութեան:

Փոքուրարը ձգւում է պարանոցից մինչև ներքև և նշանակում է Բրիստոսի պատուիրանների



ծանր լուծը, որ քահանան տանում է իր վրայ:



Պօսին ցոյց է տալիս, որ քահանան զինուած է հոգեկան քաջութեամբ իր պաշտօնը արիութեամբ կատարելու համար:



Բազպանները պատարագիչը հագնում է երկու թևերին և նշան է բազուկների զօրութեան, որ կարողանայ սրբութեամբ սպասաւորել խորհրդին:

Վակասը արծաթից շինուած կամ ասղնէգործած ուսանոց է, որի վրայ նկարուած են




լինում Յիսուսի և տառներկու առաքեալների պատկերները. վակասը դրուում է պատարագչի ուսերին և նշան է մոլորուած մարդկութեան:

Երբ վակար
գործ է դնում
եպիսկոպոսը՝
ետեից կախ-
ւած են լինում
երկու արտա-
խուրակներ:

Շուրջառը
գործ է ած-
ւում պատա-
րագի, սրբա-
զան խորհուրդ-
ների, աստ-
ւածպաշտու-
թեան և ծէսե-
րի կատարման
ժամանակ:

Շուրջառը այն
անկար քղա-
միդի նշանակութիւնն ունի, որ չարչարանքի
ժամանակ գցեցին Յիսուսի վրայ:



Թագը կամ խոյրը ակնհայտ է լինում
և նշանակում է հին և նոր կտակարանների գի-
տութիւնը:


Եսիփորոն մեծ ուրար է, որ կրում է ե-
պիսկոպոսը շուրջառի վրայ:



Գաւազանը
վարիչ հոգևորա-
կանների պատուի
նշան է և լինում
է երկու տեսակ.
—երկգլխեան օ-
ձագարդ, որ գործ
են դնում եպիս-
կոպոսը և ծայ-
րագոյն վարդա-
պետը: Եւ հո-




վուական, որ գործ է ածում կաթու-
ղիկոսը ինչպէս ամբողջ
ազգի հովուապետ:




Կոնֆեռը քառանկիւ-
նի խաչաձև զարդ է, որ
կախում է կաթուղիկոսը
աջ կողմը գօտկից, և
հովուապետական հոգևոր
զէնքի նշանակութիւնն
ունի:

Ուրարը կրում է սար-



կաւագը ձախ ուսին և նշանակում է, որ նա սկսում է արդէն Յիսուսի լուծը կրել որպէս եկեղեցական պաշտօնեայ:



Բազկուրարը ձախ թևի վրայ կրում է կի-

սասարկաւագը և նշանակում է, որ նա ևս պատրաստում է Քրիստոսի լուծը վերցնելու, որպէս եկեղեցական պաշտօնեայ:

ՆԱՏՈՒՆԻ ՊԱՇՏՈՒԹԻՒՆ ԿՆՏԱՐՈՂՆԵՐԸ

Աստուածապաշտութիւն կատարելու համար որոշեալ պաշտօնեաներ կան, որոնք կառավարում են հաւատացեալ ժողովրդին և նրանց հոգևոր կարիքները հոգում:

Այդ պաշտօնեաները հետևեալներն են.

Հայրապետ, եպիսկոպոս, վարդապետ և քահանայ:

Հայրապետը կամ կաթողիկոսը մեր ազգի ծայրագոյն գլուխն է և Հայաստանեայց եկեղեցու ընդհանրական պատրիարքը: Նա է կառավարում Հայոց եկեղեցին, ձեռնադրում է եպիսկոպոսներ, օրհնում է ս. մեռնոնք և առհասարակ վարում է ազգի կրօնական կրթութեան հոգսը:

Հայրապետը ընտրւում է ամբողջ ազգի կողմից, երգւում է հետևել Հայաստանի լուսաւորիչներ ս. Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալների և ս. Գրիգորի և միւս հայրապետների դրած կանոններին և օժտւում է ս. էջմիածնի տաճարում տասներկու եպիսկոպոսների ձեռքով: Օծելուց յետոյ գցում են նրա վրայ հայ-

բապետական քողը: Այդ քողը ամեն հանդէս-
ների ժամանակ տանում են հայրապետի առ-
ջևից:

Քացի ամենայն Հայերի կաթողիկոսից մեր
մէջ երկու մասնաւոր կաթողիկոսներ էլ կան՝
Սսի և Աղթամարի, որոնց իշխանութիւնը տա-
րածւում է միայն իրենց թեմերի վրայ:

Կան նոյնպէս երկու պատրիարքներ՝ Ներու-
սաղէմի և Կ. Պօլսի, որոնք միայն եպիսկոպոս-
ներ են, բայց ունին հոգևոր վարչական իրա-
ւունքներ:

Եպիսկոպոս նշանակում է տեսուչ. եպիս-
կոպոսի պաշտօնն է իր վիճակի համար քահա-
նաներ և ստորին պաշտօնեաներ ձեռնադրել և
հոգալ իր թեմի հոգևոր գործերը:

Եպիսկոպոսացուին ընտրում է թեմի ամ-
բողջ ժողովուրդը և ընտրուածին ձեռնադրում
է Հայրապետը, տալով նրա ձեռքը զաւագան և
ձկոյթին դնելով մատանի ինչպէս նշան իշխա-
նութեան:

Վարդապետը նոյնն է ինչ որ քահանան,
միայն վարչական պաշտօններ է կատարում:
Վարդապետը օրէնքի ուսուցիչ է և աւետարանի
քարոզիչ: Այն վարդապետները, որոնք միայն
քարոզչութեամբ են պարապած, Հայրապետի
հրամանով եպիսկոպոսից ստանում են մասնա-
ւոր և ծայրագոյն կոչումը:

Թէ կաթողիկոսը, թէ եպիսկոպոսը և թէ
վարդապետը կուսակրօն են լինում (չեն ամուս-
նացած), իրանց կեանքը հաւատացեալ ժողովրդի
կառավարելուն են նուիրած և որոշւում են քա-
հանաներից՝ գլխին վեղար կրելով:

Քահանայ նշանակում է պաշտօնեայ: Քա-
հանան ձեռնադրւում է և ս. մեռոնով օծւում
եպիսկոպոսի ձեռքով, որով դառնում է ժողովրդի
հովիւ:

Ձեռնադրութիւնը եկեղեցու խորհուրդ է և
ունի եօթն աստիճան. — դռնապան, դպիր, երգ-
մեցուցիչ, ջահընկալ, կիսասարկաւագ, սարկա-
ւագ և քահանայ:

Քահանայացուին ընտրում է եկեղեցու ծուխը
գլխաւորապէս ուշադրութիւն դարձնելով, որ նա
ունենայ կրօնական ուսում, մաքուր վարք ու
բարք, ներքին ձգտում հոգևորական լինելու և
մարմնական առողջութիւն: Ընտրեալին ձեռնա-
դրում է թեմի եպիսկոպոսը, որ իրաւունք է
տալիս եկեղեցու խորհուրդները կատարելու և
ծխի հոգևոր պէտքերը հոգալու:

Նորընծայ քահանան ձեռնադրուելուց յետոյ
քառասուն օր առանձնանում է եկեղեցու սե-
նեակում, ուր վարժւում է քահանայական դի-
տելիքների մէջ:

Սարկաւագի պաշտօնն է սպասաւորել պա-
տարագին, աւետարանը և խորհրդի ընծաները

վերաբերել, աւետարան կարդալ և հաւատի հանգանակն ասել:

Հին ժամանակ սարկաւազը աւելի մեծ պարտաւորութիւններ ունէր. նա շատ անգամ եպիսկոպոսի օգնականն էր նրա բարենպատակ գործունէութեան ժամանակ:

Սարկաւազն ու նրանից վեր հոգևոր կարգ ունեցողները կոչւում են սրբազնագործ պաշտօնեայ:

Կիսասարկաւազը և միւս աստիճանաւորները հին ժամանակ ամեն մէկն էլ իրանց առանձին առանձին պարտականութիւններն ունէին եկեղեցում, բայց այժմ դրանք ամենքն էլ միայն օգնում են աստուածպաշտութեան կարգ կատարելուն և կոչւում են եկեղեցու ստորին պաշտօնեայ:

ԱՍՏՈՒԱԾՊԱՃՏՈՒԹԵԱՆ ԳՐԳԵՐԸ

Եկեղեցում գործ են դրւում հետևեալ գրքերը.

Աւետարան, ժամագիրք, շարական, ճաշոց, խորհրդատետր, տաղարան, տօնացոյց և մաշտոց:

Աւետարանը պարունակում է Յիսուսի երկրաւոր կեանքը. գրեցին չորս աւետարանիչներ՝ Մատթէոս, Մարկոս, Դուկաս և Յոհաննէս:

Աւետարանը թարգմանուեց հայերէն հինգերորդ դարում ս. Սահակ և Մեսրոպ թարգմանիչների և նրանց աշակերտների ձեռքով:

Ժամագիրքը օրուայ ժամերի վրայ բաժանուած գիրք է, որ պարունակում է իր մէջ աստուածպաշտութեան կարգը, այն է՝ հասարակաց աստուածպաշտութեան վերաբերեալ սաղմոսները, որ փոխ են կոչւում, երգերը, աղօթքներն ու քարոզները:

Ժամագիրքը գրել են ս. Սահակ և ս. Մեսրոպ և մեր ուրիշ նշանաւոր հայրապետները:

Շարականը պարունակում է իր մէջ աւերունական, սուրբերի տօներին և հանգստեան կարգին վերաբերեալ հոգևոր երգերը, որոնք երգւում են եկեղեցում:

Շարականների մեծ մասը երգեցին ս. Սահակն ու ս. Մեսրոպը և յետոյ լրացրին մեր ուրիշ նշանաւոր հայրապետներ, մանաւանդ տասներկուերորդ դարում ճոխացրեց ս. Ներսէս Շնորհալին:

Ճաշոցը հին և նոր կտակարանից մի ժողովածու է, որ կարդացւում է եկեղեցում ամեն օր: Այդպէս է կոչւում, որովհետև մեծ մասամբ կարդացւում է ճաշու ժամերգութեանը և պատարագներին:

Սորհրդատետրի մէջ գրուած է ամբողջ պատարագի խորհուրդը:

Տաղարանի մէջ ամփոփուած են պատա-
րագի ժամանակ երգուող բոլոր երգերն ու
տաղերը:

Տօնացոյցը մի հրահանգ է, որ ցոյց է տա-
լիս, թէ Հայոց եկեղեցու տօները երբ են կա-
տարուում և այդ տօներին աստուածպաշտութիւնը
ի՞նչ կարգով պէտք է կատարել:

Տօնացոյցը կազմեցին ս. Սահակը և ս. Մես-
րոպը հինգերորդ դարում, իսկ տասնևութերորդ
դարում կարգի դրեց Սիմէօն կաթողիկոսը:

Մաշտոցի մէջ գրուած են եկեղեցու խոր-
հուրդների ու ծէսերի կատարման ձևերը, ուս-
տի և կոչուում է ծիսարան:

Մաշտոցը թարգմանեց և կարգի դրեց ս.
Մեսրոպը, որի երկրորդ անունով էլ կոչուեցաւ
այդ գիրքը մաշցոց:

Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՄԱՌՈՏ ԲԱ- ՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Պատարագ խօսքը նշանակում է նուէր կամ
զոհ:

Պատարագ է կոչուում աստուածաշտու-
թեան այն էական մասը, որով կատարուում է
Յիսուսի չարչարանքի և մահուան յիշատակը:

Պատարագի խորհուրդը սահմանեց Քրիստոս

իր մատնութեան երեկոյին աւագ հինգշաբթի
օրը Երուսաղէմի վերնատանը, երբ ձեռքն առ-
նելով հացը օրհնեց, տուեց աշակերտներին ու
ասաց. «Առէք, կերէք այս իմ մարմինն է».
նոյնպէս և վերցնելով գինին՝ օրհնեց ու ասաց.
«Խմեցէք սրանից ամենքդ, այս իմ արիւնն է».
և աւելացրեց. «Այս բանը կատարեցէք ինձ յի-
շելու համար»:

Իսկ հետեեալ օրը իսկական զոհն ու պա-
տարագը եղաւ ինքը Յիսուս, մեռնելով խաչի
վրայ՝ մարդկանց փրկելու համար:

Պատարագի մասերը.

Պատարագը բաժանուում է երկու մասի.
ա. հասարակաց պատարագ. և բ. արժանաւոր-
ների պատարագ:

Հասարակաց պատարագը սկսում է պա-
տարագի սկզբից մինչև խորհրդի ընծաների վե-
րաբերումը. այս մասում հին ժամանակ ամեն
մարդ իրաւունք ունէր ներկայ լինել:

Արժանաւորների պատարագն սկսում է վե-
րաբերումից մինչև վերջը և այդ ժամանակ կա-
րող էին ներկայ լինել միայն արժանաւորները,
որոնք և արժանի էին լինում ս. հաղորդութիւն
ընդունելուն. իսկ չմկրտուածներն ու ապաշ-
խարութեան տակ գտնուածները դուրս էին
գնում գաւիթը:

Կատարողը. Պատարագ մատուցանողը կոչ-

ւում է պատարագիչ կամ ժամարար: Պատարագի խորհուրդ կատարելու իրաւունք ունին միայն սրբազնագործ հոգեւորականներ, այն է՝ կաթողիկոսը, եպիսկոպոս, վարդապետ և քահանան:

Պատարագիչը նախ քան պատարագ անելը պատրաստուում է. նա մաքրում է իր հոգին ու մարմինը, սրբում է իր խիղճը. իր անցեալ սխալմունքները խոստովանւում է քահանային և գղջում նրանց վրայ:

Նիւթը. Պատարագի նիւթն է՝ բաղարջ հաց և անշուր գինի:

Զգեստաւորութիւն եւ սպաս դնելը. Պատարագից առաջ քահանան մտնում է խորան, հանում է վերարկուն, որ նշանակում է աշխարհային մեղքերից հրաժարուել, և հագնում է պատարագի զգեստները, որոշուած աղօթքներն ասելով:

Դուրս գալով խորանից՝ լուանում է ձեռները սեղանի առաջ ի նշան սրտի մաքրութեան: Յետոյ բարձրանալով բեմը, կարդում է յատկացրած աղօթքը և դնում է սպասը այսպէս. — դնում է ընծայարանի մօտ, վերցնում է նշխարը, դնում մաղզմայի վրայ, յետոյ գինին ածում սկիւռ մէջ և ամեն անգամ ասում, որ դա մեր տէր Յիսուս Քրիստոսի յիշատակն է:

Սպաս դնելը նշանակում է ս. կուսի աւետումը և Յիսուսի մարմին առնելը:

Յետոյ պատարագիչն իջնում է սեղանից և խնկարկելով ժողովրդին՝ կրկին բարձրանում է սեղան. այդ պաշտօնը կոչւում է աշխարհ գալոց:

Ս. ընծայի վերաբերումը.

Պատարագի ընծաները վերաբերելուց առաջ սարկաւագը ձայն է տալիս, որ ոչ մի չըմկըրտուած, անմաքուր մարդ չմօտենայ պատարագի խորհրդին: Քրիստոնէութեան առաջին դարերում այդ ժամանակ եկեղեցուց դուրս էին գնում բոլոր չըմկրտուածներն ու ապաշխարողները:

Այդ միջոցին պատարագիչը հանում է սաղաւարտը և հողաթափները, եթէ եպիսկոպոս է՝ եմիփորոնը, թագը, մատանին և հողաթափները: Սա նշանակում է, որ մինչև այդ ժամանակ պատարագիչը իշխանական կերպ ունէր, Քրիստոսին էր ներկայացնում, իսկ այնուհետև համարւում է պատարագի խորհրդի սպասաւոր: Վերաբերումը Յիսուսի մարդկութեան խորհուրդն ունի:

Ողջոյն.

Պատարագի ընծաները սարկաւագի ձեռքից ընդունելով՝ պատարագիչը աղօթում է Հօր Աստուծուն, յիշելով Յիսուսի տնօրինութիւնները, և յետոյ սարկաւագը առաջարկում է ժողովրդին միմեանց ողջունել սուրբ համբոյրով, իսկ նրանց,

որոնք արժանի չեն ներկայ լինելու սուրբ խորհրդին, դուրս գնալ և աղօթել: Խնքը պատարագչից ողջոյն առնելով՝ ողջոյնը տանում է տալիս հոգևորականներին և սրանք ժողովրդին:

Ողջոյն նշանակում է, որ ամենքը պէտք է հաշտուելով միմեանց հետ լինեն մի սիրտ և մի հոգի, հանելով իրանցից ամեն տեսակ ոխ և ատելութիւն ու թշնամութիւն դէպի իրանց ընկերները. ապա թէ իրաւունք ունենայ ներկայ լինել սուրբ խորհրդին:

Սրբագործութիւն.

Ողջոյնից յետոյ սարկաւազը զգուշացնում է ներկայ եղող ժողովրդին ահով ու երկիւղով կանգնել և զգուշութեամբ նայել, որովհետև մօտենում է հացի ու գինու սրբագործութեան ժամը, այսինքն երբ որ քրիստոնէական եկեղեցու դաւանութեան համաձայն, պատարագչի օրհնութեամբ հացն ու գինին աներևոյթ կերպով փոխւում է Քրիստոսի մարմնի և արեան:

Դպիրները երգում են հրեշտակների երգը «Սուրբ, սուրբ», իսկ քահանան այդ ժամանակ ծածուկ աղօթում է առ Հայր վերջիշելով Յիսուսի երկրաւոր կեանքի պատմութիւնը, որ աւարտւում է Յիսուսի խօսքերով, ուր նա կրկնում է «Սուրբ, սուրբից» յետոյ բարձրաձայն, բարձրացնելով նշխարը և ասելով «Առէք կերէք, այս է մարմին իմ». և վերցնելով գինին՝

ասում. «Արքէք ի սմանէ ամենեքեան այս է արիւն իմ»: Այս և սրանից յետոյ Հօր, Որդուն և սուրբ Հոգուն ուղղուած երգերի ժամանակ պատարագչի աղօթքներն ու գործողութիւնները պատարագի այն էական մասն է, որ կոչւում է սրբագործութիւն:

Յիւսակութիւն.

Սրբագործութիւնից յետոյ սարկաւազներն անցնում են սեղանի աջ կողմը և յիշատակում եկեղեցու սրբերին և ազգային նշանաւոր նահատակներին, այսինքն՝ այն ամենին, որոնք երկրի վրայ իրանց պատերազմը կատարելով՝ յաղթական կերպով փոխուել են յաւիտենական կեանքը:

Այդ ժամանակ պատարագիչը ծածուկ աղօթում է եկեղեցու հաստատութեան և ուղղափառ եպիսկոպոսների համար: Երբ սարկաւազները վերջացնում են, պատարագիչը բարձրաձայն յիշատակում է թագաւորին, հայրապետին ու նոյն եկեղեցու առաջնորդին:

Ապա անցնելով սեղանի ձախ կողմը՝ սարկաւազները յիշատակում են բոլոր կենդանի հաւատացեալներին, որոնք զինուորուած քրիստոնէական կրօնով՝ պատերազմում են աշխարհի անհաւատութեան և փորձութիւնների դէմ:

Այդ ժամանակ պատարագիչը ծածուկ աղօթում և բարեմաղթութիւններ է անում եկե-

ղեցում՝ ներկայ եղող ժողովրդի և եկեղեցու նուիրատուների կենդանիների ու ննջեցեալների համար:

Ճաշակումն.

Դպիրները երգում են Տէրունական աղօթքը՝ «Հայր մեր», որով խնդրում ենք երկնաւոր Հօրը, որ իր միածին Որդու մարմինն ու արիւնն էլ, ինչպէս մեր ամենօրեայ հացը, տայ մեզ մեր հոգիների փրկութեան համար:

Յետոյ քահանան բարձրացնում է նշխարն ու ասում «Ի սրբութիւն սրբոց». այսինքն՝ դա Տիրոջ սուրբ մարմինն է և արիւնը, որից յետոյ ընկղմում է նշխարը բաժակի մէջ և դառնալով դէպի ժողովուրդը՝ նրա ջերմեռանդութիւնն է շարժում դէպի ս. խորհուրդը:

Այնուհետև ծածկում են վարագոյրը և երգում «Տէր ողորմեա», որով հայցում են Տիրոջ գթութիւնն ու ողորմութիւնը բոլոր վշտացածների և նեղացածների և մեռածների հոգու փրկութեան համար:

Պատարագիչը նշխարը չորս մաս է անում ասելով «Լըուճն Հոգւոյն սրբոյ», որ նշանակում է թէ պատարագի խորհուրդը վերջացել է սուրբ Հոգու շնորհիւ. յետոյ աղօթելով ընդհանուր աշխարհի և իր ժողովրդի համար՝ ճաշակում է ինքը և հաղորդում նրանց, որոնք պատրաստած

են համարում իրանց և արժանի ս. խորհրդին մօտենալու:

Քահանան օրհնում է ժողովրդին և դառնում դէպի սեղան:

Գոհութիւն.

Դպիրները երգում են գոհացողական երգը՝ «Լցաք ի բարութեանց քոց Տէր», որով շնորհակալութիւն ենք յայտնում Տիրոջ, նրանից ստացած երկնաւոր բարիքի համար:

Յետոյ պատարագիչը «Որ օրհնես» նշանաւոր աղօթքը ասելով՝ իջնում է բեմից աւետարանը ձեռին և աւետարան կարդալով, պահպանիչով և տէրունական աղօթքով արձակում ժողովրդին:

Մնացեալ ժողովրդին բաժանւում է մասը:

ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ԳԼԽԱԻՈՐ ՏՕՆԵՐ.

Տօն նշանակում է ազատութեան օր, երբ մենք թողնում ենք աշխարհային բոլոր գործերը և այդ օրը պէտք է անց կացնենք աստուածահաճոյ և հոգևոր գործերով:

Եկեղեցական տօները սահմանուած են նրա համար, որ այդ օրերը փառաբանենք մեր փրկիչ Յիսուսին, Մարիամ ս. կոյսին և յարգենք այն բոլոր սրբերի յիշատակը, որոնք նահատակուել են քրիստոնէական կրօնի և եկեղեցու՝ մանաւանդ մեր ազգային եկեղեցու հաստատութեան համար:

Տօները երեք տեսակ են՝ տէրունական, աստուածածնի և սրբոց:

Տէրունական տօներ.

Տէրունական տօներից չորսը կոչւում են տաղաւար կամ նաւակառիքի տօներ. դրանք են.

1. Յիսուսի ծննդեան եւ մկրտութեան տօնը, որ կոչւում է նաև ջրօրհնէք, որովհետև այդ օրը ջուր են օրհնում խաչով ու աւետարանով և ածում են մէջը մեռն իբրև յիշատակ Յիսուսի մկրտութեան: Այդ տօնը կատարում ենք միշտ յունուարի 6-ին:

Եկեղեցին այդ օրը տօն է կատարում, ո-

րովհետև Յիսուս ծնուելով Մարիամ ս. կոյսից Բեզդենէմի այրի մէջ և Յովհաննէս Մկրտչից մկրտուելով Յորդանան գետում՝ դրանով սկիզբ դրեց մարդկային ազգի փրկութեան գործին:

2. Յիսուսի յարութեան տօնը, որ կատարւում է մարտ կամ ապրիլ ամիսներին, նրա մահուան երրորդ օրը: Այդ տօնը կոչւում է նաև Զատիկ, որովհետև Յիսուսի յարութիւնը պատահեց Հրէից Զատիկի տօնին:

Յարութեան օրը եկեղեցին տօն է սահմանել նրա համար, որովհետև Յիսուս իր յարութեամբ ոչնչացրեց մահը, այն է՝ խաւարի իշխանութիւնը և մարդկային ազգին պարգևեց ազատութեան յոյս:

Յիսուս իր յարութիւնից յետոյ երկրի վրայ մնաց քառասուն օր. երևաց իւղարբեր կանանց, իր աշակերտներին և հաւատացեալներին:

3. Քրիստոսի պայծառակերպութեան տօնը, որ կատարւում է յուլիս ամսին:

Այս տօնը սահմանեց ս. Գրիգոր լուսաւորիչը, երբ վերացնելով Անահիտ կուռքի տօնը, որ կոչւում էր նաև Վարդավառ, կուռքի տեղը վարդերով զարդարուելու պատճառով, նոյն օրը սահմանեց տօնել Յիսուսի պայծառակերպութիւնը, իսկ անունը էլի մնաց Վարդավառ:

Յիսուսի պայծառակերպութիւնն այն է, որ Յիսուս կամենալով ցոյց տալ իր աստուածային

փառքը՝ վերցրեց իր երեք աշակերտներին և գնաց Թափօր սարը, ուր նրա գէմքը լուսաւորուեց արեգակի պէս, շորերը սպիտակացան ինչպէս ձիւն և այդ ժամանակ ամպը ծածկեց նրան աշակերտների աչքից. նրանց ականջին հնչեց Աստծու ձայնը, որ ասում էր. «Դա է իմ սիրելի որդին, դրան լսեցէք»:

4. Քրիստոսի խաչափայտի վերացման տօնը, որ կատարում ենք սեպտեմբերի 14-ին մօտակայ կիրակի օրը:

Այդ օրը երեկոյեան ժամերգութեան ժամանակ բազմեցնում են խաչը և զարդարում հոտաւէտ ծաղիկներով: Հոգևոր դասը զգեստաւորուած և հոգևոր երգերով դուրս են տանում խաչը և եկեղեցու շուրջը աշխարհի շորս կողմ Թափօր կատարում:

Քրիստոսի խաչը Պարսից Սոսրով Թագաւորը գերի էր տարել Երուսաղէմից Պարսկաստան 622 թուին. Հերակլ կայսրը 629 թուին յաղթելով պարսիկներին՝ ս. խաչը յետ բերեց Երուսաղէմ և սեպտեմբերի 14-ին մեծ հանդիսով բազմեցրին եկեղեցում, որից և սկիզբն առաւ տօնել խաչվերացի տօնը:

Տէրունական միւս տօները սրանք են՝

Մարիամ ս. կուսի աւետումը, որ կատարւում է միշտ ապրիլի 7-ին:

Փրկչի անուանակոչութիւնը, կատարւում է յունուարի 13-ին:

Յիսուսի Բառասնօրեայ տաճար տանուելը, կատարւում է փետրուարի 14-ին:

Համբարձում, որ կատարւում է Չաակից քառասներորդ օրը:

Սուրբ Հոգու գալուստը վերնատանը, որ կատարւում է Համբարձումից տասն օր անց՝ եօթն օր շարունակ:

Աստուածածնի տօներ.

Աստուածածնի տօների մէջ նշանաւոր է նրա վերափոխման տօնը, որ կատարում ենք օգոստոսի 15-ի մօտակայ կիրակի օրը:

Այս տօնն էլ տէրունական շորս մեծ տօների նման առղաւարի տօն է և նաւակատիք. այդ օրը պատարագից յետոյ կատարւում է խաղողի օրհնութիւն և ինն օր նախատօնակ է լինում ի պատիւ ս. կուսի:

Վերափոխումն այն է, որ երբ Մարիամ ս. կոյսը վախճանուեց՝ առաքեալները նրա մարմինն ամփոփեցին Գեթսեմանի պարտիզում: Այդ ժամանակ Բարդուղիմէոս առաքեալը ներկայ չէր. երբ եկաւ՝ ցանկացաւ նրա մարմինը տեսնել, բաց արին դամբանը և Աստուածածնին չգտան մէջը: Նրան երկաց ս. կուսի հոգին և

յայտնեց, որ Աստուածածնի մարմինը վերափոխուել է երկինք:

Մարիամ ս. կուսի մնացեալ տօները սըրանք են.

Ծնունդ — սեպտեմբեր 8-ին.

Երեք տարեկան ճանար ճանուելը — նոյեմբերի 21-ին.

Յիդութիւն Աստուածածնի Աննայից — դեկտեմբերի 9-ին:

Սուրբերի գլխաւոր տօներ.

Հայոց եկեղեցին տօնում է բազմաթիւ սըրբերին, որոնց յիշատակը կատարում է երկուշաբթի, երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը. չորեքշաբթի և ուրբաթ մեր եկեղեցին տօն չի կատարում, ինչպէս ապաշխարութեան օրեր. իսկ կիրակին նուիրուած է Յիսուսի յաբուութեան յիշատակին:

Սրբերի տօների մէջ մեծ տօներ համարւում են հետեւեալները.

Ս. Թադէոս եւ Բարդուղիմէոս առաքեալների տօնը, ինչպէս Հայաստանի առաջին լուսաւորիչների, որ կատարում ենք նոյեմբերի վերջին կամ դեկտեմբերի սկզբին:

Թադէոս առաքեալի եւ Սանդուխտ կուսի

տօնը, որոնք նահատակուեցան Սանատրուկի ձեռքով. կատարւում է յուլիս ամսին:

Ս. Գրիգոր լուսաւորչի առաջին տօնը, յիշատակ նրա չարչարանքի և խորվիրապ գցուելու, կատարում ենք մեծ պատի հինգերորդ շաբաթ օրը:

Ս. Գրիգոր լուսաւորչի երկրորդ տօնը, խոր վիրապից դուրս գալու յիշատակը, կատարում ենք հոգեգալստից երկու շաբաթ յետոյ յունիս ամսին:

Ս. Գրիգոր լուսաւորչի երրորդ տօնը, նրա մարմինը գտնելու յիշատակը, տօնում ենք վերջին տօնից երկու շաբաթ յետոյ:

Ս. Հռիփսիմեանց տօնը, որ կատարում ենք հոգեգալստից մի շաբաթ յետոյ:

Ս. Էջմիածնի համազգային տօնը, որ կարգեց ս. Գրիգոր լուսաւորիչը, երբ աւարտեց Էջմիածնի տաճարի շինութիւնը. տօնում ենք յունիսին խորվիրապից դուրս գալու տօնի միւս օրը:

Հրեշտակապետների տօնը, որ կատարում ենք նոյեմբեր ամսին:

Ամենայն սրբոց տօնը, նոյեմբեր ամսին:

Ղեւոնդեանց քահանաների և Վարդանանց զօրավարների երկու մեծ տօները կատարում ենք բուն բարեկենդանի երեքշաբթի և հինգշաբթի օրերը:

Ս. Սահակ եւ Մեսրոպ թարգմանիչները մեծ տօնը, որ կատարում ենք յունիս ամսին:

Ս. Աբգար անդրանիկ քրիստոնեայ թագաւորի տօնը կատարում ենք զեկտեմբեր ամսին:

Ս. Տրդաւս թագաւորի տօնը, որ կատարւում է յուլիս ամսին:

Մնացեալ սրբերի տօները կատարում է եկեղեցին ինքը, բայց այդ օրերը կիրակի չեն պահւում:

ՂԱՐԺԱԿԱՆ ԵՒ ԱՆՂԱՐԺ ՏՕՆԵՐ

Հայոց եկեղեցու տօները կատարման ժամանակի վերաբերութեամբ երկու տեսակ են՝ շարժական և անշարժ:

Տօների մեծ մասը շարժական են. այդ տօները կապ ունին Զատիկի տօնի հետ. և որովհետեւ Զատիկի տօնը ամեն տարի միևնույն օրը չի գալիս, այլ շարժւում է յետ ու առաջ, ուստի և տօներն էլ նրա հետ միասին շարժւում են յետ կամ առաջ:

Կան և անշարժ տօներ, թէպէտ թուով շատ քիչ, որոնք ամեն տարի կատարւում են միևնույն ամսին և միևնույն օրը.

Անշարժ տօները սրանք են.

Յիսուսի ծնունդն ու մկրտութիւնը յունւարի 6-ին.

Յիսուսի անուանակոչութիւնը յունւարի 13-ին.

Տեառնընդառաջ փետրուարի 14-ին.

Մարիամ ս. կուսի աւետումը ապրիլի 7-ին.

Մարիամ ս. կուսի ծնունդը՝ սեպտեմբերի 8-ին.

Մարիամ ս. կուսի ընծայումը տաճարին՝ նոյեմբերի 21-ին.

Մարիամ ս. կուսի յղութիւնը Աննայից՝ դեկտեմբերի 9-ին:

Նաւակահիք.

Ասացինք, որ հինգ գլխաւոր տօները կատարւում են նաւակատիրներով:

Նաւակատիք բառը նշանակում է եկեղեցու շինութեան տօն կամ հանդէս և առնուած է հին ուխտի եկեղեցուց. երբ Սողոմօն թագաւորն աւարտեց տաճարի շինութիւնը, եօթն օր նաւակատեաց տօն կատարեց: Մեր նախնիքն էլ հինգ մեծ տօները սահմանեցին նաւակատիք կատարել և հրէաներից որոշուելու համար կարգադրեցին պատարագ անել և ուրախութեան տօն կատարել, ուտելով ամեն տեսակ կերակուր, բացի

մսից, որովհետև հրէաները նաւակատիքները գոհաբերութեամբ էին տօնում:

ՏՕՆԱԿԱՆ ՂԱԲԱԹՆԵՐ

Մեր եկեղեցին տարուայ շաբաթների մեծ մասը նուիրած ունի աւետարանի զանազան առակների կամ կրօնական դէպքերի յիշատակին:

Մեծ պասի առաջին և երկրորդ կիրակիները կոչւում են արտաքսուման և յիշատակ են Ադամի արտաքսուելուն դրախտից:

Երրորդ կիրակին յիշատակ է անառակ որդու առակին:

Չորրորդ կիրակին յիշատակ է Տիստի և մեծատան ու աղքատ Ղազարոսի առակներին:

Հինգերորդ կիրակին յիշատակ է անիրաւ դասաւորի առակին:

Վեցերորդ կիրակին յիշատակ է Քրիստոսի առաջին և երկրորդ զալսեան:

Աւագ շաբաթ կոչւում է մեծ պասի վերջին շաբաթը. աւագ շաբաթի ամեն մի օր առանձին խորհուրդ ունի:

Աւագ երկուշաբթին նուիրուած է աշխարհի արարչութեան և Ադամի դրախտից արտաքսուելուն:

Աւագ երեքշաբթին յիշատակ է տասը կոյսերին և վերջին դատաստանին:

Աւագ չորեքշաբթին յիշատակ է Յուդայի մատնութեան: Չորեքշաբթի գիշերը ժամերգութիւնից յետոյ կատարուում է գիշեր ժամուադօթքը—Եկեցէն ապաշխարողների համար:

Աւագ հինգշաբթին յիշատակ է խորհրդական ընթրիքի, ուր Քրիստոս սահմանեց հաղորդութեան խորհուրդը: Այդ գիշեր կատարուում է Քրիստոսի շարչարանքի կարգը և կարդացւում է նրա կտակը:

Աւագ ուրբաթ յիշատակ է Քրիստոսի խաչելութեան և մահուան: Ճաշի ժամերգութեանը կատարուում է խաչելութեան կարգը, իսկ երեկոյեան հանդիսաւոր կերպով՝ Քրիստոսի թաղման թափոր է լինում եկեղեցուց դուրս:

Աւագ շաբաթ յիշատակ է Քրիստոսի թաղման: Երեկոյեան Զատիկի ճրագալոյց է, նախատօնակ, նաւակատիք և լուծւում է պահքը՝ բացի մսից:

Իսկ կիրակի Քրիստոսի յարութիւնն է կամ Զատիկը:

Այնուհետև բոլոր կիրակիները նուիրւած են Քրիստոսի յարութեան յիշատակին, բացի յատուկ տօն սահմանած կիրակիների օրերից:



JULY 1881

State of New York, County of Albany

IN SENATE,

January 18, 1882.

REPORT

OF THE

COMMISSIONERS OF THE LAND OFFICE

IN RESPONSE TO A RESOLUTION

PASSED BY THE SENATE

ON JANUARY 18, 1882.

ALBANY:

WILLIAM B. EDEY, PRINTER.

1882.

ALBANY: W. B. EDEY, PRINTER.

1882.

ALBANY: W. B. EDEY, PRINTER.

1882.

ALBANY: W. B. EDEY, PRINTER.

1882.

ALBANY: W. B. EDEY, PRINTER.

1882.

ALBANY: W. B. EDEY, PRINTER.

1882.

ALBANY: W. B. EDEY, PRINTER.

1882.

ALBANY: W. B. EDEY, PRINTER.

1882.

ALBANY: W. B. EDEY, PRINTER.

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

Յովհ. ա. ֆ. Մարտիրոսեանի եւ Գիւլս ա. ֆ. Աղանեանի

1. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՀԱ-
ՄԱՌՕՏ ԴԱՍԱԳԻՐՔ, պատկերազարդ. պետական
և քաղաքային դպրոցների համար.
գինն է 25 կոպեկ, գումարով գնողին 25% զեղջ
2. ԿՐՕՆԻ ԴԱՍԵՐ, Առաջին տարի, պատկերազարդ.
ծխական, քաղաքային և պետական դպրոցների
համար.
գինն է 20 կ. գումարով՝ 25% զեղջ.

○○○○○

ՀԵՏՉՀԵՏԷ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԵՆ

«Կրօնի դասեր»-ի երկրորդ եւ երրորդ տարիները.

Դիմել՝ հեղինակներին և թուր գրավաճառներին.

3964

ՀՀ Ազգային գրադարան



NL0030800

3845